ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 փետրվարի 2015թ. թիվ 27-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Լոռու մարզի տարածքում 2015 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Համայնքների 2015թ. բյուջեներում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2015թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն.

2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվա 30-ը ներկայացնել տեղեկատվություններ՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի (տեղեկատվություններ ուղարկել **lorimpv@mail.ru** էլեկտրոնային հասցեին).

3) Մինչև ս/թ մարտի 1-ը կազմել համապատասխան միջոցառումների պլան «Համայնքի տարածքում 2015 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման» մասին և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար.

3. Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝

2015 թվականի ընթացքում պարբերաբար քննարկել «Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. փետրվարի 9
ք.Վանաձոր